«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ
28 Փետրվարի 2023, N 5 - 5

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՆԻՍՏՈՒՄ (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3) ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 1-ի նիստում (արձանագրություն N 3) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Տնտեսագետ» հրատարակչությունում հրատարակությունների իրականացման աշխատակարգում» կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝
   1) աշխատակարգի 9-րդ կետում «լույս ընծայումից հետո 18 օրինակ» բառերը փոխարինել «լույս ընծայումից հետո 20 օրինակ» բառերով.
   2) աշխատակարգի 9-րդ կետը «2 օրինակ՝ ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչությանը» բառերից հետո լրացնել «, 2 օրինակ՝ ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջին)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. փետրվարի 28
Երևան